Համազասպ ԳԱԼՍՏՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու

1989 թ. ավարտել է ԵրԺՏԻ (այժմ՝ ՀՊՏՀ) պլանափնտեսագիտական ֆակուլտետը: 1980-1982 թթ. ծառայել է խորհրդային զինված ուժերում: 2004 թ. ստացել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: 2004-2019 թթ. դասավանդել է ՀՀ կառավարման ակադեմիայում, Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայում և Տուրիզմի հայկական ինստիտուտում:

2019 թվականից ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի հետազոտող է:

Հեղինակ է մեկ տասնյակ գիտական հոդվածների և մենագրության:

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՆԴԻՐԸ

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԹԵՐԱԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Հիմնաբառեր. *Երևանի բյուջե, բյուջետային ծախսեր, կայուն զարգացում, կապիտալ ծախսեր, թերակատարված ծախս*

Համայնքի կայուն զարգացումը ենթադրում է կապիտալ արդյունք, ինչը նշանակում է, որ նշված խնդրի լուծման համար մեծ տեղ պետք է հատկացնել կապիտալ ծրագրերի մշակմանն ու իրականացմանը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ համայնքի ենթակառուցվածքները կարիք ունեն պարբերաբար թարմացման և արդիականացման:

Հոդվածում, ըստ Երևանի 2019 թ. բյուջեի կատարման տարեկան հաշվետվության, կատարվել է ծախսային ծրագրերի, ծախսերի թերակատարման պատճառների ու դրանց ուղղվածության, ինչպես նաև նախորդ տարիների ծախսերի կատարողականների համեմատական վերլուծություն, ինչը հնարավորություն է ընձեռել վեր հանելու այն խնդիրներն ու թերացումները, որոնք առկա են տեղական ինքնակառավարման մարմնում:

Տարեկան կտրվածքով նախատեսված ծախսի թերակատարումը, ծրագրային առումով, համարվում է չկատարված աշխատանք, որը չի կարող իր բացասական ազդեցությունը չունենալ համայնքի զարգացման ոչ միայն կարճաժամկետ, այլև միջնաժամկետ և երկարաժամկետ միջակայքում՝ որպես համայնքի կայուն զարգացումն ապահովելու նպատակով նախատեսված և հատկացված, սակայն չիրացված ներուժ:

Տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ) բյուջետային ծախսերի հիմքում համայնքի գործունեության պլանավորումն է, որը, ըստ էության, կառավարչական գործունեության հիմքն է, ինչից էլ բխում են կառավարման մնացած գործառույթները: Ըստ

ծրագրվող գործողության ժամանակի՝ պլանավորումը կարող է լինել ընթացիկ (կարճաժամկետ), մարտավարական (միջնաժամկետ) և ռազմավարական (երկարաժամկետ):

Ըստ ծախսային ծրագրերի, ծախսերի թերակատարման պատճառների ու դրանց ուղղվածության վերլուծությունը, ինչպես նաև նախորդ տարիների համեմատականը հնարավորություն են ընձեռում բացեիբաց տեսնելու, թե ինչ խնդիրներ են առկա տեղական ինքնակառավարման մարմնում և որտեղ է կառավարման թերացումը: Խնդիրները դիտարկվել են մի քանի ուղղություններով, մասնավորապես՝ որքանով է ծրագիրն իրատեսական, ինչպիսի ռեսուրսային բաշխում կամ վերաբաշխում է իրականացվել, ինչ հետևողականությամբ են ծրագրվել, ապա վերահսկվել գնման գործընթացն ու դրա փաստացի կատարումը, ինչպես են վերահսկվել կապիտալ ծախսերը, դրանց կատարողականները և այլն: Զարգացման ամեն մի ծրագրի համար սրանք այն կարևորագույն սկզբունքներ են, որոնք համակարգված և արդյունավետ կերպով կիրառելու պարագայում հնարավոր է հասնել հաջողության՝ ապահովելով համայնքի կայուն զարգացումը:

Երևանի 2019 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունն ուսումնասիրելիս պարզ է դառնում, որ ծախսերի փաստացի կատարման տոկոսային արդյունքը նվազագույնն է համայնքի կարգավիճակ ձեռք բերելու տարվանից ի վեր: Այսպես՝ մայրաքաղաքի 2019 թվականի բյուջեի միջոցների օգտագործմամբ կատարվել է 66,760,785.0 հազար դրամի ծախս՝ ծրագրված (ճշտված) 94,690,726.50 հազար դրամի դիմաց կամ ծրագրվածի 70.5%-ը[1]. ցուցանիշ, որը չի կարող չանհանգստացնել: Բյուջեի կատարողականն ըստ ծախսային հոդվածների վերլուծելիս և նախորդ տարիների հետ համեմատելիս[2] տեսանելի է ծախսային երեք խմբերի (անհրաժեշտ, ցանկալի, հնարավոր) միջև կշռային անհամապատասխանություն, որն արդեն իսկ վկայում է համայնքի կայուն զարգացմանը խոչընդոտող խնդիրների առկայության մասին:

Հաշվետվության եկամտային մասի մուտքերի և ծախսային ծրագրերի մասի պլանավորված ու փաստացի ելքերի համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ անգամ ֆինանսական աղբյուրների առկայության պարագայում, քանակական, ծավալային և որակական առումով չեն իրականացվել մի շարք կարևորագույն

ԱՂՅՈՒՍԱԿ 1

Երևան քաղաքի 2019 թվականի բյուջեի ծախսերի կատարողականն ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման[3]

հազար դրամ

Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժնի անվանումը	*Տարեկան (ճշտված) բյուջեով նախատեսված*	*Փաստացի կատարված*	*Կատարողականի %*
Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	9,810,829.20	8,408,556.65	85.71%
Պաշտպանություն	57,030.00	38,742.20	67.93%
Տնտեսական հարաբերություններ	14,497,813.20	3,408,382.30	23.51%
Շրջակա միջավայրի պաշտպանություն	13,842,286.80	9,414,239.25	68.01%
Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն	8,931,419.10	5,512,092.70	61.72%
Առողջապահություն	379,960.00	299,847.10	78.92%
Հանգիստ, մշակույթ և կրոն	3,810,400.60	3,302,101.00	86.66%
Կրթություն	29,980,856.10	28,087,558.00	93.68%
Սոցիալական պաշպանություն	2,051,381.60	1,439,522.00	70.17%
Պահուստային ֆոնդեր	11,328,749.90	6,849,743.80	60.46%
Ընդամենը	**94,690,726.50**	**66,760,785.00**	**70.50%**

[1] https://www.yerevan.am/am/finance/
[2] «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, հոդված 35, կետ 9:
[3] https://www.yerevan.am/am/finance/

ծրագրերով նախատեսված՝ վերանորոգման, հիմնանորոգման, արդիականացման և նոր ենթակառուցվածքների ստեղծման տարեկան կտրվածքով նախանշված աշխատանքներ, հետևապես՝ չեն իրագործվել այդ ծրագրերով սահմանված նպատակներն ու խնդիրները:

Հաշվետվության ծախսային բաժնում, ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման, ներկայացված է Երևանի 2019 թվականի բյուջեի ծախսերի կատարողական աղյուսակը, որն ըստ գործառնական բաժինների ցույց է տալիս դրանց կշիռն ընդհանուրի մեջ (աղյուսակ 1):

Մտահոգիչ պատկեր է «Տնտեսական հարաբերությունների» ծախսային բաժնում, որտեղ կատարողականը 23.51% է: Այս ցուցանիշը վկայում է այն մասին, որ վարկային միջոցներով իրականացվող մի շարք նպատակային ծրագրեր (էներգաարդյունավետության, շրջանցիկ ճանապարհի կառուցման, մետրոպոլիտենի վերակառուցման և այլն) կատարվել կամ կապիտալացվել են նախատեսվածի ¼-ից էլ պակաս չափով, և սա այն դեպքում, երբ այդ վարկերի տոկոսադրույքները յուրաքանչյուր տարի պետությունը մարում է ամբողջությամբ՝ անկախ կատարված աշխատանքի չափից: Մասնավորապես՝ «Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի ներդրումային ծրագիր», «Եվրոպական միությունը Երևանի արևային համայնքի համար դրամաշնորհային ծրագիր» և ««Եվրոպական միությունը Երևանի արևային համայնքի համար ծրագրի» համաֆինանսավորում» ծրագրերով կատարողականը կազմել է 2.53%, Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման երկրորդ, ինչպես նաև «Եվրոպական միության հարևանության ներդրումային ծրագրի» աջակցությամբ իրականացվող «Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման երրորդ դրամաշնորհային ծրագրերով»՝ 13.84%, «Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող «Երևանի քաղաքային լուսավորության ծրագիր», «Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող «Երևանի քաղաքային լուսավորության ծրագիր» (պատվիրակված լիազորություններ) և Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և բնապահպանական գործընկերության ֆոնդի աջակցությամբ իրականացվող «Երևանի քաղաքային լուսավորության» դրամաշնորհային ծրագրերի մասով՝ 23.4%:

Ավելի դժգույն է պատկերը Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի, Եվրոպական ներդրումային բանկի, Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և բնապահպանական գործընկերության ֆոնդի և Եվրոպական միության հարևանության ներդրումային գործիքի աջակցությամբ իրականացվող «Երևանի կոշտ թափոնների կառավարման» ծրագրերի պարագայում. փաստացի ծախսն այս դեպքում կազմել է 35,331.07 հազար դրամ՝ նախատեսված 2,796,134.5 հազար դրամի փոխարեն կամ կատարողականը՝ 1.26%: Սա Երևանի համար կենսականորեն անհրաժեշտ մի ծրագիր է, որի շրջանակում նախատեսվում է Նուբարաշենի աղբավայրի հարակից՝ շուրջ 32 հա տարածքում նախագծել, կառուցել և շահագործել եվրոպական չափանիշներին համապատասխան նոր աղբավայր, ինչպես նաև նույն չափորոշիչներին համապատասխան՝ մեկուսացնել անմխիթար վիճակում գտնվող Նուբարաշենի և Աջափնյակի աղբավայրերը: Մայրաքաղաքի բնապահպանական, աղբավայրերին կից գտնվող շենքերի բնակիչների ֆիզիկական անվտանգության համատեքստում, այսպիսի ծրագրերի կատարման հետաձգումը չի կարող որևէ արդարացում ունենալ, և քաղաքային իշխանությունը պետք է հստակ գիտակցի, որ վատնված ժամանակն այս դեպքում կարող է բարձրացնել ոլորտի անկառավարելիության մակարդակը, որը կարտահայտվի մի շարք անլուծելի խնդիրների շղթայով, չկանխատեսված ծախսերի և բնապահպանական ֆորս-մաժորների ավելացմամբ:

Սփոփիչ չեն նաև համայնքային միջոցներով իրականացվող ծրագրերի փաս-

տացի կատարողականի ցուցանիշները: Պատկերը մասնավորապես հետևյալն է. «Հուշարձանների վերանորոգում և պահպանում»՝ 25.79%, «Ոռոգման ցանցի կառուցում և վերանորոգում»՝ 28.20%, «Վթարային պատշգամբների նորոգում»՝ 29.14%, «Բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգում և պահպանում»՝ 57.89%, «Բազմաբնակարան շենքերի հարթ և թեք տանիքների վերանորոգում»՝ 60.58%, «Բազմաբնակարան շենքերի բարեկարգման այլ աշխատանքներ»՝ 64.64%: Իսկ այս խմբի «առաջատարը» «Նախադպրոցական հաստատությունների հիմնանորոգում և վերանորոգում ծրագիրն» է, որտեղ նախատեսված փաստացի ծախսը կազմել է 125,302.99 հազար դրամ՝ ճշտված 1,145,150.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը՝ 10.94%, որի շրջանակում վերանորոգվել է ընդամենը 1 մանկապարտեզ:

Յուրաքանչյուր բյուջետային ծրագիր կամ մատուցված ծառայություն ունի աշխատանքների գնահատման ցուցանիշների համակարգ, ըստ որի՝ արժևորվում է այն իրողությունը, թե որքանով են իրագործվել սահմանված նպատակներն ու խնդիրները: Բացի մուտքային (մարդկային, նյութական, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսներ) և ելքային (ծավալներ) ցուցանիշներից, պետք է դիտարկվեն նաև արդյունքի որակական (հետևանքային) ցուցանիշները, որոնք ցույց են տալիս իրականացված աշխատանքի ազդեցության և ձեռքբերումների, ինչպես նաև ծրագրի խնդիրների լուծման գործում առաջընթացի մակարդակը:

Խնդիրն այս տեսանկյունից դիտարկելիս ակնհայտ է դառնում, որ տարեկան կտրվածքով հաջողված պատմությունները չափազանց սակավաթիվ են: Թերևս, կարելի է առանձնացնել կոշտ թափոնների կառավարման համակարգի մեկ բաղադրիչ տարրի՝ աղբահանության (այն էլ՝ առանց սանիտարական մաքրման ծառայության) մասնակի կարգավորման իրողությունը: Ընդգծենք, որ աղբի հեռացումը քաղաքից մաքրության և հիգիենայի ապահովման անհրաժեշտ, սակայն ոչ բավարար պայման է, ուստի պետք ներդնել փոխլրացման սկզբունքով հստակ գործող կառուցակարգ: Հետևապես՝ վաղ է խոսել ամբողջական հաջողված պատմության մասին, քանի դեռ սանմաքրման հիմնախնդիրը, ըստ էության, դեռևս լուծման սաղմնային փուլում է:

Վերլուծելով 2019 թվականի հաշվետվությունը՝ հանգում ենք այն եզրակացության, որ բյուջետային ֆինանսական միջոցներով միավոր արդյունքների վրա կատարված ծախսերի հաշվարկման տեսանկյունից, այն չի կարելի համարել արդյունավետ՝ ոչ տնտեսական և ոչ էլ սոցիալական առումով:

Նույնը կարելի է ասել նաև համայնքային ծառայությունների մատուցմանն առնչվող ցուցանիշների վերաբերյալ, քանի որ դրանք ձևավորվում են ըստ ծառայություններից օգտվողների բավարարվածության կամ գոհունակության աստիճանի, իսկ մայրաքաղաքի բնակչության վերաբերմունքը հասարակական տրանսպորտի, սանիտարական մաքրման, բնապահպանական, կանաչապատման, բարեկարգման, մանկապարտեզների հիմնանորոգման հիմնախնդիրների նկատմամբ անցումային սպասողական է և դեռևս չի տեղափոխվել լավատեսականի տիրույթ:

Երևանի բյուջեի փաստացի կատարողականի վերջին 7 տարիների ցուցանիշների համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք գումարային տեսքով, սկսած 2017 թվականից, նվազել են, և, ցավոք, 2019 թվականին այդ միտումը պահպանվել է: Ընդ որում, էականորեն մեծացել է ճշտված բյուջեի և փաստացի կատարողականի միջև խզվածքը, որն այս պարագայում կարող է դիտարկվել որպես ոչ ճիշտ պլանավորման ցուցիչ, քանի որ տարվա ընթացքում բյուջետային ճշտումներն արվում են ծախսային ծրագրերի ծավալային և որակական արդյունավետությունն ապահովելու նպատակով:

Գծապատկեր 1-ը ցույց է տալիս, որ վերջին երկու տարիներին ճշտված բյուջեի և փաստացի կատարողականի միջև առկա է բավական ազդեցիկ խզվածք, որն ըստ տարիների համապատասխանաբար



ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

Երևան քաղաքի բյուջեի ծախսերը (մլրդ դրամ) 2013-2019 թթ.[4]

կազմում է 22.7 և 28 միլիարդ դրամ՝ ի վնաս փաստացի կատարողականի, ինչը նշանակում է, որ բյուջեի ծախսային մասի թերակատարումը որևէ բնութագրիչով չի կարող վկայել համայնքի զարգացման և, առավել ևս, կայուն զարգացման միտման մասին:

Ցավոք, այս խզվածքի հիմնական մասնաբաժինը կապիտալ ծախսերի, այլ ոչ թե տնտեսումների տիրույթում է, իսկ միջոցների կառավարման տեսանկյունից, կապիտալ ծախսերի թերակատարումները պարզապես կարող են համարվել չօգտագործված կամ կորսված հնարավորություններ: Տարեկան կտրվածքով նախատեսված ծախսի թերակատարումը, ծրագրային առումով, դասվում է որպես չկատարված աշխատանք, ինչը չի կարող իր բացասական ազդեցությունը չունենալ համայնքի զարգացման ոչ միայն կարճաժամկետ, այլև միջնաժամկետ և երկարաժամկետ միջակայքում՝ իբրև համայնքի կայուն զարգացումն ապահովելու նպատակով նախատեսված և հատկացված, սակայն չիրացված ներուժ: Եվ այնպես չէ, որ տվյալ տարվա ընթացքում էականորեն թերակատարված կապիտալ ծախսերի ծրագրերը հաջորդ տարի կատարելով, հնարավոր է ամբողջապես շտկել իրավիճակը. տարաբնույթ ֆորս-մաժորները կամ անկանխատեսելի իրավիճակները երբեք էլ պետք չէ բացառել: Համավարակի ներխուժումը համաշխարհային տնտեսական, քաղաքական, կենցաղային կյանք ապացուցում է վերոշարադրյալ մտքերի ճշմարտացիությունը:

Համայնքի կայուն զարգացման առումով, 2013-2019 թթ. Երևանի բյուջեով. նախատեսված ծախսերի պլանային և կատարողական ցուցանիշների հետահայաց համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ 2013-2016 թթ. ծախսերի կատարման շարժընթացն ակնհայտորեն ունեցել է զարգացման որոշակի միտում, որին հաջորդել է դանդաղ անկումը, իսկ վերջին երկու տարիներին, անկախ ընդհանուր բյուջեի գումարային մեծության տեսանելի ավելացումից, դա ավելի ցածր մակարդակում է, քան 2014-ին: Մասնավորապես, համաձայն տարեկան հաշվետվության, 2019 թվականին պլանավորված և ապա ճշտված ծախսային բյուջեի 1/3-ը փաստացի չի օգտագործվել, իսկ կատարողականը հասել է վերջին տարիների կատարողականների նվազագույն աստիճանին՝ 70.5%:

Անշուշտ, ֆինանսական հոսքերի արդյունավետ կառավարման և մայրաքաղաք Երևանի կայուն զարգացման տեսանկյունից, նախապես բեկումնային հայտարարված տարվա ճշտված բյուջեի շուրջ 30% թերակատարումը չի կարող համարվել բավարար արդյունք և չլինել մտահոգիչ:

Ինքնին հասկանալի է, որ վերոնշյալ 30%-ի մեջ առկա է նաև գնման գործընթացից առաջացող տնտեսումների որոշա-

[4] Տվյալներն ըստ yerevan.am պաշտոնական կայքի «Ֆինանսներ» բաժնի արխիվային նյութերի:

ԱՂՅՈՒՍԱԿ 2

Երևան քաղաքի բյուջեի ծախսային փաստացի կատարողականը 2013-2019 թթ.

մլրդ դրամ

Տարի	Հաստատված բյուջե	Ճշտված բյուջե	Փաստացի կատարողական	Ճշտված բյուջեի նկատմամբ փաստացի կատարողականը՝ %	Ճշտված բյուջեի նկատմամբ փաստացի կատարողականի տարբերությունը
2013	66.06	65.46	62.16	95.0	- 3.3
2014	69.49	71.00	69.09	97.3	- 1.9
2015	72.10	71.26	77.07	108.2	**5.8**
2016	78.36	78.26	78.48	100.3	**0.2**
2017	84.41	73.19	70.99	97.0	- 2.2
2018	80.23	85.52	62.80	73.4	- 22.7
2019	84.34	**94.69**	**66.72**	70.5	- 28.0

կի գործոնային ներազդեցություն, սակայն վերջինս, մասնավորապես՝ 2019 թվականին, ավելի չի եղել կատարողականի բացասական տարբերության՝ 28 մլրդ դրամի 10%-ից (շուրջ 2.8 մլրդ դրամ):

Հետևապես՝ այդ հանգամանքը՝ թե՛ բովանդակային, թե՛ ծավալային առումով, չի փոփոխում թերակատարման ամբողջական բնութագիրը: Իսկ գնման գործընթացի տնտեսումների խնդիրը նույնպես վերլուծության կարիք ունի՝ գործընթացի արդյունքի որակական գնահատականի առումով, քանի որ շատ հաճախ մրցույթում առաջարկված անիրատեսական նվազագույն գինը հնարավորություն չի ընձեռում շահող կազմակերպությանը մատուցելու ներկայացվող պահանջներին և չափորոշիչներին ամբողջովին համապատասխանող ծառայություն, կատարելու շինարարական աշխատանք կամ մատակարարելու ապրանքներ: Ուստի հետագայում՝ մի քանի տարի անց, տնտեսված գումարը կարող է վերածվել նույն ապրանքատեսակի, շինարարական աշխատանքի կամ ծառայության մատուցման համար ծրագրվող կրկնակի ծախսի:

Տարեկան հաշվետվությունում տարվա ընթացքում չիրագործված կամ թերի իրագործված կապիտալ ծրագրերի պարագայում գնման գործընթացի կարգավորումներին և ժամկետներին հղում անելը, դրանք փոխկապակցելով շինարարական աշխատանքների գնման գործընթացին նախորդող նախագծային աշխատանքների գնման գործընթացի ժամանակատարության խնդրի հետ, այնքան էլ հիմնավոր չէ, քանի որ հաջորդ տարվա կապիտալ ծախսերի բյուջետային հայտերի ընդունման համար պարտադիր պայման է տվյալ կապիտալ ծրագրի նախագծանախահաշվային փաստաթղթերի առկայությունը: Դա նշանակում է, որ, ըստ էության, տվյալ տարվա շինարարական աշխատանքներին նախորդող նախագծանախահաշվային աշխատանքների ծառայությունների մատուցման փուլը պետք է ավարտված լիներ դեռևս մեկ տարի առաջ:

Ուսումնասիրելով Երևանի 2020 թվականի բյուջեն, ինչպես նաև քաղաքապետի բյուջետային ուղերձն ու ակնկալիքները՝ տեսանելի է նրա՝ բեկում մտցնելու պատրաստակամությունը, սակայն համավարակային տարին անխուսափելիորեն կատարելու է իր խմբագրումներն ու շտկումները՝ հանգեցնելով կապիտալ ծախսերի հերթական թերակատարման, այս դեպքում՝ արդեն օբյեկտիվ ներազդող գործոնի ազդեցությամբ:

Այդուհանդերձ, մայրաքաղաքի առօրյա հոգսերը, ինչպես նաև այնպիսի «անկոչ հյուրը», ինչպիսին համավարակն է, երբևէ չպետք է խոչընդոտեն քաղաքային իշխանության հավակնությունները՝ արմատապես փոխելու ներկայիս իրավիճակը՝ ապահովելով հնգամյա ծրագրով նախատեսված և տարեկան ծրագրով ամրագրված աշխատանքների որակյալ իրականացում, քանի որ, կարծես թե, այլևս նահանջի տեղ չկա:

Մայրաքաղաքի կայուն զարգացման

տեսլականը, շոշափելի ձեռքբերումներով հանդերձ, պետք է օր առաջ դառնա իրողություն, իսկ հաջողված պատմությունները՝ հատ ու կենտից դառնան բազում և շարունակական՝ վկայելով ինչպես երևանցու և Երևան այցելող հյուրերի համար առավել անվտանգ, բարեկեցիկ, բարեկարգ և արժանավայել միջավայրի առկայության, այնպես էլ մայրաքաղաքաբնակների կյանքի որակի էական բարելավման մասին:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, հոդված 1.2:
2. «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 11.16:
3. «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 70-82:
4. https://www.yerevan.am/am/finance/
5. https://www.yerevan.am/uploads/media/default/0001/86/5def862b88111fcfe3a6d9b99785219536429b06.pdf

Амазасп ГАЛСТЯН
Исследователь исследовательского центра «Амберд», АГЭУ, кандидат экономических наук

ТЕРРИТОРИАЛЬНОЕ РАЗВИТИЕ

ПРОБЛЕМА УСТОЙЧИВОГО РАЗВИТИЯ ГОРОДА ЕРЕВАНА В КОНТЕКСТЕ НЕПОЛНОГО ИСПОЛНЕНИЯ БЮДЖЕТА ПО РАСХОДАМ

Устойчивое развитие общины подразумевает капитальные расходы, то есть для выполнения указанной задачи большое внимание следует уделять разработке и реализации капитальных программ, поскольку инфраструктура общины нуждается в регулярном обновлении и модернизации.

В статье, основанной на годовом отчете об исполнении бюджета города Еревана на 2019 год, приводится анализ программ расходов и их направлений, сравнительный анализ с показателями прошлых лет, причины их неполноценного или частичного выполнения. В итоге частичный ежегодный расход по конкретной программе считается невыполненной работой, что не может не оказывать негативного влияния не только на краткосрочное, но и на среднесрочное и долгосрочное развитие общины и рассматривается как распределенный, но нереализованный потенциал.

Ключевые слова: *бюджет Еревана, бюджетные расходы, устойчивое развитие, капитальные затраты, неполноценный расход*

Hamazasp GALSTYAN
Researcher at "Amberd" Research Center, ASUE, PhD in Economics

ERRITORIAL DEVELOPMENT

PROBLEM OF SUSTAINABLE DEVELOPMENT OF THE CITY OF YEREVAN IN THE CONTEXT OF INCOMPLETE EXECUTION OF BUDGET EXPENSES

Sustainable development of the community implies a capital expenses, thus in order to solve the mentioned problem a great deal of attention should be paid to the development and implementation of capital programs, as the community's infrastructure needs regular renovation and modernization. In this paper, based on the annual report of Yerevan's budget for 2019, we have done comparative analysis of expenditure programs, reasons for under-execution of expenditures and their directions, as well as expenditures of previous years. This analysis provides an opportunity to identify the problems and shortcomings of local government bodies. As a result, in terms of planning, under-execution of expenditures is considered as unfinished work, which cannot but have a negative impact not only on the short-term but also on the medium-term and long-term development of the community. It is considered as a distributed but unrealized potential.

Keywords: *budget of Yerevan, budget expenditures, sustainable development, capital expenditures, inferior expenditures*